

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1975 թ. հուլիս—դեկտեմբեր)

ԲՈՒՆԴԱՐԻԱ

Ռուսենում նոյեմբերի 19-ին տեղի է ունեցել դասախոսություն՝ նվիրված հայ ժողովրդի ծագմանն ու կազմավորմանը (զեկուցող՝ Լ. Նահապետյան)։

«Երևան», 28 նոյեմբերի

Յամպոլում շուքով տոնվել է Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը, որը կազմակերպել էր բուլղարա-սովետական բարեկամության քաղաքային կոմիտեն։ Մեծ գրողի կյանքի և ստեղծագործության մասին դասախոսել է «Երևան» թերթի գլխավոր խմբագիր Հ. Օրմանճյանը։ Վերջում Վարպետի մասին հուշեր է պատմել Ա. Տեր-Հովհաննեսյանը։

Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակը նշվել է նաև Սիլիստրայում, Ռուսենում, Բուրգասում և այլուր։

«Երևան», 28 նոյեմբերի
12 դեկտեմբերի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարական «Կորվինա պրես» հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայել «Հայաստան. բնակավայրերը և ճարտարապետությունը» խորագրով գիրքը, որը պատմում է էրեբունի—Երևանի, Գառնիի, էջմիածնի, Աշտարակի, Զվարթնոցի, Սևանա լճի, Հաղարծնի վանքի, Գոշավանքի, Գեղարդի, Այրիվանքի և Մատենադարանի մասին։ Ալբոմում զետեղված են համառոտ ներածություն հայ ժողովրդի պատմության մասին և 147 սև ու 16 գունավոր լուսանկարներ։

«Հայրենիքի ձայն», 10 դեկտեմբերի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստի «Մերիդիանե» հրատարակչության «Արվեստի փոքր գրադարան» մատենաշարով լույս է տեսել «Հայկական մանրանկարներ» գիրքը, որտեղ ներկայացված են 64 սև-

սպիտակ և գունավոր մանրանկարներ։ Այս հրատարակությունը 1968-ին Երևանում լույս տեսած համապատասխան հատորի (որը կազմել էր Լ. Ա. Դուրնովոն) թարգմանությունն է։ Ռումիններեն այս գրքի ընդարձակ ներածականը գրել է արվեստի պատմության ռումինացի հայտնի հետազոտող Քորինա Նիքոլեսքուն, թարգմանիչն է Ալիս Բուլատյան-Մոակերը։

«Պայքար», 18 նոյեմբերի

Բուխարեստում «Արվեստի գրադարան» մատենաշարով լույս է տեսել Յուրջիս Պալթուշայ-թիսի «Զարմանահրաշ միջին դարը» աշխատությունը։ Հեղինակը գրքում զգալի տեղ է հատկացրել հայկական արվեստին և մշակույթին։ Ներկայացված է Սիս քաղաքում 1274 թ. գրըզագրված «Ավետարանագիրքը», վերլուծված է 1331 թ. Սարգիս Պիծակի ծաղկած «Ավետարանագիրքը»։

Գրքում տեղեկություններ են տրված հայ ճարտարապետության, խաչքարերի, Մարմաշենի վանքի, էջմիածնի XII—XIII դարերի ձեռագրերի մասին։

«Հայրենիքի ձայն», 10 դեկտեմբերի

«Լրաբերում» տպագրված մի հաղորդում տեղեկացնում է, որ Բուխարեստում 1974 թ. լույս տեսած Ի. Դիմիտրու-Սնակովի «Ռումենները Հռոմի դիվանաթուղթերուն մեջ» աշխատությունում զետեղված են 148 վավերագրեր, որոնց բնագրերը գտնվում են Վատիկանի զաղտնի դիվանաթղթերի մեջ։ Թերթը գրում է, թե այդ թղթերում պահված հազվագյուտ վավերագրերն մեկն ալ էլիզարեթոպոլիսի (Տումպրովեն) Մարչելլո Զեքի հայ քահանային 1780 հունիսի 11 թվակիր տեղեկագիրն է, ուր կիսոսի ԺԸ դարու վերջերը Խրանսիլվանիա գտնված հայերու վիճակի մասին։ Վավերագրում միաժամանակ տրված է հակիրճ պատմական ակնարկ 1650 թ. հայերի Մուղավիայից

Տրանսիլվանիա գաղթելու և այնտեղ հայկական քաղաքներ ու բնակավայրեր ստեղծելու մասին:

«Լրաբեր», 2 օգոստոսի

Գ Դ Է

ԳԴԷ-ում լույս տեսնող «Զին ունդ ֆորմ» ամսագրի 5-րդ համարի մեծ մասը նվիրված է հայ գրականությանը: Ամսագրում զետեղված են նմուշներ Մաշտոցի, Նարեկացու, Ֆրիկի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի ստեղծագործություններից: Ամսագրում տեղ է հատկացված նաև Վահագն Դավթյանին, Սիլվա Կապուտիկյանին, Աշոտ Գրաշուն, Ռազմիկ Դավոյանին, Սերո Խանզադյանին և Հրանտ Մաթևոսյանին:

Թարգմանությունները կատարել են Ադուֆ էնդլերը, Անդրիաս Ռայմանը, Հելգա Մելմանը, Հելգա Գուլեն, Շառլոտա Կոստա:

Բաժինը եզրափակվում է Լ. Մկրտչյանի «Հայ գրականության 15 դարը» հոդվածով:

«Նոր օր», 9 դեկտեմբերի

ԼԻՐԱՆԱՆ

Բեյրութում լույս է տեսել Լևոն Վարդանի «Ժամանակագրություն հայկական տասնհինգի» վերնագրով գիրքը, որ բաղկացած է 300 էջից, ընդգրկում է 1915-ից մինչև 1923 թ. արևմտահայերի կոտորածների մանրամասնությունները:

«Զարթոնք», 16, 17, 18 սեպտեմբերի
5, 8, հոկտեմբերի

ԻՐԱՆ

Իսպահանում, հոկտեմբերի 28-ին տեղի է ունեցել հայկական ճարտարապետության ցուցահանդեսի բացումը, որին ներկա են գտնվել Իսպահանի կառավարիչն ու քաղաքապետը, Սովետական Միության, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի դեսպանները: Ցուցահանդեսում ներկայացված են եղել IV—XVIII դդ. հայկական ճարտարասրտական կոթողների նմուշներ:

«Ապագա», 27 դեկտեմբերի

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի «Թայմս»-ի 1975 թ. ապրիլի 19-ի համարում Քրիսթաֆեր Ուոլլերի ստորագրու-

թյամբ լույս է տեսել հայկական կոտորածներին նվիրված մի հոդված, որը թարգմանաբար հրատարակել է «Պայքարը» իր հունիսի 27-ի համարում:

«Պայքար», 27 հունիսի

ՖՐԱՆՍԻԱ

Լույս է տեսել ֆրանսիացի արևելագետ ակադ. պրոֆ. Ռենե Կրուսեի «Հայաստանի պատմությունը» սկզբից մինչև 1071 թ. Գիրքը բաղկացած է 644 էջից, կցված են 10 քարտեզներ:

«Նոր կյանքում» այս գրքի մասին տպագրված է Սիմոնա Ֆեսչիի համառոտ գրախոսականը:

«Նոր կյանք», 15 օգոստոսի

Լույս է տեսել Ռուբեն Մելիքի կողմից կազմված «La poesie arménienne--des origines à nos jours» վերնագրով գիրքը, որում ընդգրկված են մոտ 90 հեղինակների 200 բանաստեղծություններ՝ Մեսրոպ Մաշտոցից սկսած մինչև մեր օրերը: Հատորի առաջաբանը գրել է Ռուբեն Մելիքը, իսկ վերջում զետեղված է Արտավազդ Պերպերյանի «Հայ քաղաքակրթության ժամանակագրությունը»:

«Նոր կյանք», 19 սեպտեմբերի

Ֆրանսահայ գրողների ընկերակցության ֆրանսահայ մշակութային միության և ֆրանսահայ երիտասարդաց միության (ԺԱՖ) նախաձեռնությամբ հոկտեմբերի 25-ին Փարիզի Շոպեն Պլնյե սրահում տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին, որին մասնակցել են Սովետական Միության Փարիզի դեսպանատան աշխատակիցներ, փարիզահայ մտավորականներ, արվեստագետներ, զանազան միությունների ներկայացուցիչներ:

«Աշխարհ» թերթի հոկտեմբերի 25-ի համարը ամբողջովին նվիրված է Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին: Տպագրված են հոդվածներ, հիշողություններ Վարպետի մասին, զետեղված են Իսահակյանի նկարները:

«Աշխարհ», 25 հոկտեմբեր, 8 նոյեմբեր

Ֆրանսահայ գրողների ընկերակցությունը սկսել է հրատարակել վեցամսյա նոր պարբերաթիվը «Տեղեկատու» անունով, որի խմբագրականում ասված է. «...Այսօր այս վեցամսյա

պարբերականով ֆրանսահայ գրողներու ընկերակցությունը պիտի փորձե ավելի մոտենալ ժողովուրդին և տեղական կապ պահել անոր հետ»:

«Աշխարհ», 22 նոյեմբերի

Ֆրանսիայի «Ֆլամարիոն» հրատարակչությունը լույս է ընծայել ֆրանսուհի Նան Գառլուի Voyage en Arménie ճանապարհորդական նոթերի պատկերազարդ ֆրանսերեն հատորը՝ 215 էջ: Առաջաբանում հեղինակը ներկայացնում է հայոց պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, այնուհետև տրված են ճանապարհորդական հիշողությունները:

«Ապագա», 29 նոյեմբերի

ԻՏԱԼԻԱ

«Իտալիա—Սովետական Միություն» ընկերության հայկական մասնաճյուղի նախաձեռնությամբ դեկտեմբերին Բոլոնիայում բացվել է «Սարգսից մինչև մեր օրերը» նկարչական ցուցահանդես, ուր ցուցադրվել են Մ. Սարյանի, Գ. Խանջյանի, Մ. Ավետիսյանի, Հ. Հակոբյանի և մի շարք այլ նկարիչների կտավներ:

«Պայքար», 19 դեկտեմբերի

ՇՎԵՅՑԱՐԻԱ

«Տրիբյուն դը ժընևը» մի փոքրիկ հաղորդագրություն է տպել Շվեյցարիայի հայ գաղութի մասին, որից տեղեկանում ենք, որ ժնևում ապրում են մոտ 600 հայեր:

«Հայերուն համար Ապրիլ 24 թվականը կարևոր ոգեկոչում մըն է: ...Ջարդերու 60-ամյակի առթիվ Զվիցերիո հայությունը կկանգնեցնե հուշարձան մը Թրուանեի եկեղեցվո բակին մեջ...»:

«Ապագա», 20 դեկտեմբերի

ԱՎՍՏՐԻԱ

Փարիզի «Հառաջ» թերթի 1975 թ. հուլիսի 25-ի համարում ասվում է, որ Ֆրանց Վերֆելի աճյունը Լոս-Անջելոսի հայ համայնքի օժանդակությամբ փոխադրվել է Վիեննա, որի կենտրոնական գերեզմանատանը տեղի է ունեցել թաղման հանդիսավոր արարողություն: Արարողությանը մասնակցել են փոխքաղաքապետ տիկին Զանտները, Վիեննայի Միխիթարյան միաբանության հայրերը, հայ գաղութի վարչության

նախագահ Ն. Վարդյանը և բազմաթիվ այլ անձինք:

«Պայքար», 2 օգոստոսի

ՀՈՒԱՆԴԻԱ

Հոլանդիայի հայ գաղութում ապրում են 600 հայեր, որոնք հիմնականում եկել են Ինդոնեզիայից: Սկսել է հրատարակվել «Տեղեկաթերթ» անունով պարբերաթերթ, որը լույս է տեսնում հայերեն և հոլանդերեն: Թերթը անդրադառնում է գաղութի գործունեությանը և ապագա ծրագրերին: Հոլանդական հեռուստատեսությամբ տրվել է պատմական ակնարկ հայերի մասին:

«Պայքար», 13 հուլիսի

Ա Մ Ն

Մայկլ Զ. Արլենի «Անցք դեպի Արարատ» հավածաշարքը, որ տպագրվել է Ամերիկայի գեղարվեստական «Դը Նյույորքըր» պարբերաթերթում 1975 թ. սկզբին, այժմ լույս է ընծայվել առանձին գրքով և արժանացել է բազմաթիվ այլազգի գրաքննադատների բարձր գնահատանքին:

«Ապագա», 13 սեպտեմբերի

«Նոր օր» թերթը հայտնում է. «Լույս է տեսել Տիգրան Պոյաճյանի կողմից կազմված և խմբագրված «The Case for a Forgotten Genocide» գիրքը, որը պարունակում է հարյուրավոր փաստաթղթեր, վկայություններ՝ անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, ռուսական, թուրքական և այլ աղբյուրներից: Գիրքը բաղկացած է 500 էջից, պատկերազարդ է, ունի քարտեզներ:

«Նոր օր», 27 հունիսի

Լույս է տեսել ԱՄՆ-ի և Կանադայի 21 հայ բանաստեղծների ստեղծագործությունների ժողովածուն 104 էջով: Գրքում զետեղված են հեղինակների նկարները, տրված են հակիրճ կենսագրական տեղեկություններ:

«Ապագա», 20 սեպտեմբերի

Նյու-Յորքում, Ծալան Սանուց, Թեքեյան մշակութային, Համազգային հայ մշակութային և Հայ գրական բարեկամներու միությունների միացյալ հանձնախմբի նախաձեռնությամբ շուրջ տոնվել է Ավետիք Իսահակյանի ծննդյան

100-ամյակը: Տրվել է ճոխ համերգ և ցուցադրվել է «Ավետիք Իսահակյան» կինոնկարը:

«Զահակիր», 18 դեկտեմբերի

Լույս է տեսել Ավետիք Իսահակյանի լավագույն բանաստեղծությունների և ասացվածքների հատընտիրը՝ անգլերեն, պրոֆ. Նդիշն Զրաքյանի թարգմանությամբ: Հատորը պարունակում է 104 բանաստեղծություն և 57 ասացվածքներ, նկարազարդ է:

«Պայքար», 27 դեկտեմբերի

Ընդառաջելով հայ ուսանողների խնդրանքին, Բոստոնի համալսարանը հաստատել է հայերեն լեզվի դասընթաց, որը կազմակերպել է արդի օտար լեզուների և գրականության բաժինը:

«Ապագա», 27 դեկտեմբերի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալի Թերեյան մշակութային միությունը 1975 թ. սեպտեմբերի 13-ից սկսել է հրատարակել «Ապագա» շաբաթաթերթը, որի խմբագիրն է Արսեն-Նուպար Մամուրյանը:

«Ապագա», 13 սեպտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

1975 թ. սեպտեմբերի 6-ից Բուենոս-Այրեսում սկսել է լույս տեսնել «Սարաարապատ» պարբերականը, որը օրգանն է Արշակ Զոպանյան մշակութային միության (արտոնատերն է Նահապետ Նահապետյանը): Թերթը լույս է տեսնում հիմնականում իսպաներեն լեզվով, սակայն նախատեսված է հետզհետե ընդարձակել նրա հայերեն մասը:

«Պայքար», 9 հոկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ